

ՀՏԴ: 61(071):378

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՐԵՎԱՆԻ Մ. ՅԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Մուրադյան Ա.Ա.¹, Ավետիսյան Լ.Ռ.¹, Բայկով Ա.Վ.², Ավետիսյան Գ.Ա.¹, Բարոյան Կ.Մ.³

¹ ԵՊԲՀ, վարչակազմ

² ԵՊԲՀ, կրթական ծրագրերի բաժին

³ ԵՊԲՀ, ընդհանուր բժշկության ֆակուլտետ

Ստացված է՝ 17.09.2020, գրախոսված է՝ 09.10.2020, ընդունված է՝ 14.10.2020

Բանալի բառեր՝ բարձրագույն բժշկական կրթություն, որակավորումների ազգային շրջանակ, համապատասխանեցում, կրթության որակ, ինստիտուցիոնալ հավաստարմագրում, կրթական բարեփոխումներ:

Ելևելով բարձրագույն առողջապահական կրթության ոլորտում ներգրավված շահառուների մեծ թվից, ազգային և միջազգային կարգավորումների լայն շրջանակից, բժշկական մասնագիտությունների հատուկ կարգավիճակից, կրթության որակի միջազգային պահանջների խստացման միտումներից, ինչպես նաև գլոբալ աշխատաշուկայի դինամիկ փոփոխվող պահանջարկից՝ ներկայումս անչափ կարևորվում է կրթական ծրագրերի համապատասխանեցման մեթոդաբանության պատշաճ կիրառումը բուհերում: Համապատասխանեցումը սովորաբար ընկալվում է որպես բովանդակային չափորոշիչների համախմբի և դրանք չափելու համար կիրառվող գնահատման համաձայնեցում: Կրթության ոլորտում համապատասխանեցումը ենթադրում է որոշակի մասնագիտությունների կրթական ծրագրերի բարելավում ներքին որոշումների ընդունմամբ՝ փաստերի վրա հիմնված որակի ներքին ապահովման շրջափուլային և շարունակական գործընթացի միջոցով [13, 18]: Այն վերաբերում է կրթական ծրագրերով նախանշված ուսումնառության վերջնարդյունքներին՝ կրթական տարբեր մակարդակներում և տարբեր տեսանկյուններից: Հետևաբար կրթության ոլորտում համապատասխանեցումը հնարավոր է իրականացնել հաստատության կողմից որդեգրված և կիրառվող վերջնարդյունքահեն մոտեցման դեպքում:

Մասնագիտության կրթական ծրագրերը (ՄԿԾ) համապատասխանեցվում են երկու հարթություններում՝ ուղղահայաց և հորիզոնական [13, 18, 20]:

Ուղղահայաց համապատասխանեցում: ՄԿԾ-ների ուղղահայաց համապատասխանեցումն իրականացվում է երկու մակարդակներում՝ 1) ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱԾ) նկարագրիչներ [5]՝ ՄԿԾ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ, 2) ՄԿԾ ուսումնառության վերջնարդյունքներ՝ ՄԿԾ դասընթացի ուսումնառության վերջնարդյունքներ:

ՈԱԾ-ի և ՄԿԾ-ի ուսումնառության վերջնարդյունքների համապատասխանեցման շրջանակը ներառում է կրթական միջավայրին բնորոշ մեծաթիվ բաղադրիչներ, որոնք պետք է համապատասխանեն բուհի առաքելությանը և ուղղվածությանը՝ ներառելով ազգային և տարածաշրջանային համատեքստը:

Ըստ վերոնշյալի՝ անհրաժեշտ է ՄԿԾ-ի մշակման գործընթացում խորությամբ ընկալելի դարձնել ուսումնառության նախանշված վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցումը, ինչպես նաև ուղղորդվել որակի ապահովման՝ ուսումնառության արդյունքների վրա հիմնված սկզբունքով, քանի որ ըստ այդմ՝ ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները համապատասխանեցվում են ՈԱԾ-ով սահմանված բնութագրիչներին [16]: Վերջինս ներկայացնում է որակավորումների միջև առկա փոխադարձ կապը և միտված է ներառելու և համակարգելու ազգային որակավորման ենթահամակարգերը, ինչպես նաև բարելավելու թափանցիկությունը, հասանելիությունը, առաջխաղացումը և շնորհվող որակավորումների որակը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի և քաղաքացիական հասարակության պահանջները: Մեկ այլ բնորոշմամբ՝ ՈԱԾ-ն ազգային մակարդակում կամ կրթական համակարգի որոշակի մակարդակում միակ նկարագիրն է, որը հստակեցնում և պարզաբանում է բարձրագույն կրթության ոլորտում շնորհվող որա-

*** ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ**

Ա.Վ. Բայկով
ԵՊԲՀ կրթական ծրագրերի բաժին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Կոյունի 2
Էլ. փոստ՝ msejournal@yahoo.com
Հեռ.՝ (+374) 11 62 10 31

կավորումների միջև առկա կապը:

ՈԱՇ-ը միջազգայնորեն հասկանալի է և հստակ նկարագրում է բարձրագույն կրթության ոլորտի բոլոր որակավորումները և ուսումնական այլ նվաճումներ՝ դրանք ներդաշնակորեն փոխկապակցելով միմյանց [16]:

Նշենք, որ 2005թ. Նորվեգիայի Բերգեն քաղաքում եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) պատասխանատու նախարարների հանդիպման ընթացքում ընդունվեց եվրոպական որակավորումների ընդհանուր շրջանակը, որի հիմքում ներառվեցին դուբլինյան նկարագրիչները [21], իսկ 2018թ. մայիսի 24-25 Փարիզում տեղի ունեցած ԵԲԿՏ բարձրագույն կրթության պատասխանատու նախարարների կողմից ընդունվեց առավել ընդգրկուն համապարփակ շրջանակ՝ հաշվի առնելով Երևանյան կոմյունիկեի պարտավորությունները [19]:

Հորիզոնական համապատասխանեցում: Հորիզոնական համապատասխանեցումն ուսումնառության նախանշված վերջնարդյունքների և կիրառվող գնահատման, ուսումնառության և դասավանդման համակարգերի ներդաշնակեցումն է: Այն բարձրագույն կրթության ոլորտում դասընթացի մշակման հիմնարար սկզբունք է, ՄԿԾ-ին ներկայացվող պահանջների հիմքում ընկած հայեցակարգ, ըստ որի կառուցողական համապատասխանություն է ստեղծվում ուսումնառության արդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների միջև [9, 10, 17]: Ակնհայտ է, որ հորիզոնական համապատասխանեցման տեսանկյունից դասավանդման և ուսումնառության բոլոր ցուցանիշների միջև ներդաշնակության ապահովումը մեծ նշանակություն ունի դասավանդման և ուսումնառության այնպիսի տեսակների ընտրության հարցում, որոնք կնպաստեն դասավանդման արդյունավետության մեծացմանը: Կառուցողական համապատասխանեցումը ներկայումս բարձրագույն կրթության առավել առանցքային հիմնահարցերից մեկն է [10]: Այն դարձել է կրթական ոլորտում միջազգայնորեն ընդունված մոտեցում, ըստ որի ռազմավարական պլանավորումը և ինստիտուցիոնալ քաղաքականությունը փոխկապակցվում են մասնագիտությունների և դասընթացների ուսումնառության ու դասավանդման հետ [20]:

Նպատակը

Սույն աշխատանքի նպատակն է տալ 2015-2020թթ. ժամանակահատվածում Երևանի Մ. Զեքուրյան անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) մասնագիտական կրթական ծրագրերի շրջա-

նակներում կիրառվող համապատասխանեցման մեթոդաբանության նկարագիրը:

Նյութը և մեթոդները

Հետազոտության նյութ են հանդիսացել 2015-2020թթ. ԵՊԲՀ գործունեության հաշվետվությունները, վիճակագրական տվյալները, ինստիտուցիոնալ, գերատեսչական, պետական, միջազգային կարգավորիչ իրավական ակտերը և մասնագիտական գրականությունը:

Արդյունքները և դրանց քննարկումը

2019-ին ԵՊԲՀ-ն իրականացրեց ենթակառուցվածքային երկրորդ հավատարմագրման գործընթացը, ընդ որում ինքնավերլուծությունում որպես առանձին չափանիշ քննարկվել են նաև մասնագիտության կրթական ծրագրերը (ՄԿԾ, 3-րդ չափանիշ) [7]: Ինքնավերլուծության շրջանակներում համապատասխանեցման գործընթացը ներկայացվել է՝ ըստ ուղղահայաց և հորիզոնական հայեցակարգային դրույթների՝ դիտարկելով որակավորումների ազգային շրջանակը որպես մասնագիտությունների մակարդակի դասակարգման գործիք, որի հիմքում դրված են ուսումնառության արդյունքում ձեռքբերվող նախանշված չափանիշներ՝ համապատասխան բնութագրիչներով [5, 18]: Հարկ է ընդգծել, որ ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում 2010-2020թթ. պետական կրթական չափորոշիչներից անցում կատարվեց, դեպի ՈԱՇ, նախանշելով ոլորտային որակավորումների շրջանակների (ՈՈՇ) համակարգի ներդրումը՝ որպես հաջորդող տրամաբանական քայլ:

Ինքնավերլուծության զեկույցում նշվում է, որ համալսարանն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 7-ի թիվ 714-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ՈԱՇ-ի պայմաններով [5], որի համաձայն՝ որակավորումը իրավասու և լիազորված ուսումնական հաստատության կողմից տրված հավաստումն է առ այն, որ անհատը ձեռք է բերել սահմանված չափորոշիչներին համապատասխան գիտելիք, կարողություն և հմտություն, որոնք նրան հնարավորություն են ընձեռում աշխատելու մասնագիտական ոլորտում կամ շարունակելու կրթությունը: Համալսարանն առաջնորդվել է ՀՀ ՈԱՇ-ի 5 տիրույթներով, որտեղ գիտելիքի, կարողության և հմտության հետ միասին նկարագրված են հաղորդակցման, ընդհանրական իմացական կարողությունների, ինքնուրույնության և պատասխանատվության բնութագրիչներ, առաջադրվող տվյալ մակարդակին համապատասխան որակավորում ձեռք բերելու համար անհրաժեշտ

ծանրաբեռնվածությունը [5]:

Յայտնի է, որ բարձրագույն կրթության համակարգում և տրվող որակավորումներում թափանցիկության ապահովման առանցքը ուսումնական վերջնարդյունքներն են [14], որոնք կարողության և հմտության ձևաչափերում նկարագրվում են ըստ դրանց ծավալի, խորության, բարդության, բազմազանության, ընտրողականության, ինքնավարության, պատասխանատվության և հաշվետվողականության:

Ուղղահայաց համապատասխանեցումը՝ բենչմարքինգի իրականացմամբ ապահովում է ներդաշնակություն որակավորում շնորհող տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների և ներքին ու միջազգային չափանիշների և լավագույն փորձի միջև:

Յորիզոնական համապատասխանության ապահովման կարևոր բաղադրիչներից մեկը, դասավանդման տեսակներն ու մեթոդներն են, որոնց կիրառումը պայմանավորված է ուսուցման եղանակով (դեմ առ դեմ, հեռակա, հեռավար, առցանց, խառը, համագործակցային և այլն): Այսինքն՝ ՄԿԾ-ների համապատասխանեցումն իրականացվում է ենթակարգային եղանակով՝ համընդգրկուն և վայրընթաց կարգավորման համակարգով և ներքին համապատասխանեցմամբ՝ ապահովվելով դասավանդման և ուսումնառության գործընթացների ու գնահատման մեթոդների ներդաշնակությունը [9, 10, 17]: Յամապատասխանեցման լիարժեք ներդրումն ապահովում է ՄԿԾ-ի կրթական բաղադրիչների պարույրածն ինտեգրում, որը հորիզոնական և ուղղահայաց ինտեգրման միասնական, եռաչափ ինտեգրման տեսակ է՝ առարկաների և ուսումնառության ժամանակի գործոնների միջև լիարժեք ինտեգրված ուսումնական պլան [11, 12]: Ուշագրավ է, որ ազգային մակարդակով Յայաստանի Յանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներով և ինքնավերլուծության գեկույցի կից փաստաթղթային փաթեթով սահմանվում է ուղղահայաց և հորիզոնական համապատասխանեցման անհրաժեշտությունը [7]:

Դիտարկենք, թե ինչպես են ընթացել գործընթացները համալսարանում այս ուղղությամբ: Ինստիտուցիոնալ մակարդակով 2015-2020թթ. բուհում մշակվել և ներդրվել է ՄԿԾ-ների դասընթացների լրացման նոր ձևաչափ՝ լրացման համապատասխան ուղեցույցով, որով կարևորվում են Բյումի տաքսոնոմիայի ակտիվ բայերի կիրառմամբ վերջնարդյունքների ձևակերպումը, ուղղահայաց և հորիզոնական համապատասխանեցումը՝

ուսպլանների և դասընթացների նկարագրերում աստիճանական փոփոխությունների ներդրմամբ՝ հաշվի առնելով նաև մոտ 25 արտասահմանյան բուհերի համանման ՄԿԾ-ների ուսպլանների համեմատական վերլուծությունը՝ որակավորումների ճանաչման եվրոդիրեկտիվի [15] և Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի բժշկական բազային կրթության որակի գլոբալ չափորոշիչների [8] կիրառմամբ: Յաշվի առնելով համապատասխանեցման մեթոդաբանության ներդրման կարևորությունը՝ այս տարիներին կազմակերպվել և անցկացվել են հանդիպում-վերապատրաստումներ դիպլոմային մակարդակի ՄԿԾ-ների դասընթացներ իրականացնող բոլոր ամբիոնների վարիչների և ուսումնական մասի պատասխանատուների հետ: Յաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՄԿԾ-ների վերջնարդյունքների վերաձևակերպման և ՅՅ ՈԱԾ-ի բնութագրիչներին համապատասխանեցման ստուգման ու ապահովման աշխատանքներ՝ համաձայն համապատասխանեցման ազգային ուղեցույցի [18]: Յամալսարանում ներկայումս կիրառվում է միջազգայնորեն ընդունված կադապրային մոտեցումը՝ կատարելագործված տարբերակված թվայնացված գնահատմամբ՝ համապատասխանեցումն առավել հստակ չափելու և գնահատելու համար:

Ուշագրավ է, որ նորարարական ձևաչափով պրեռեկվիզիտային առարկաների և նախորդ մակարդակներում ուսումնական վերջնարդյունքների սահմանումը հնարավորություն է ընձեռել ուսանողների կողմից առարկաների՝ առավել արդյունավետ կերպով յուրացման համար: Սակայն պրեռեկվիզիտային առարկաների բարեհաջող հանձնումը միշտ չէ, որ պարտադիր էր հաջորդ մոդուլների ուսումնառության համար (2011-2018թթ. ՅՅ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված՝ ՅՅ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգով [4] մինչև 12 կրեդիտի սահմաններում ակադեմիական պարտքերի հանձնման մասով), որով պայմանավորված՝ համալսարանը դիմել էր նախարարություն՝ այս կարգում փոփոխություններ կատարելու առաջարկով: Առաջարկն ընդունվեց և հաստատվեց ՅՅ կրթության և գիտության նախարարի 17.12.2018-ի N 1676-Ն հրամանով՝ որոշակի ազատություն տալով բուհերին այդ կարգի կիրառման և չհանձնած առարկաների ցանկերը հստակեցնելու առումով [6]: Յամալսարանը տեղայնացրեց փոփոխված կարգը՝ սահմանելով մինչև 12 կրեդիտի չափով չհանձնած ոչ մասնագիտական առարկաների դասընթացների ցանկերը՝ ըստ ՄԿԾ-

ների: Ակնկալվում է սույն որոշման երկարաժամկետ աստիճանական դրական ազդեցությունը II-V կուրսերի ուսանողների առաջադիմության վրա:

Նշենք, որ ներկայումս ԵՊԲԳ-ում կիրառվում են դասավանդման հիմնական տեսակները՝ դասախոսություններ, սեմինարներ, լաբորատոր և գործնական պարապմունքներ՝ սիմուլյացիոն կրթական մեթոդաբանության կիրառմամբ, հիվանդի անկողնու մոտ ուսուցում, ցուցադրություններ, կուրսային աշխատանքներ, թեզերի պաշտպանություններ, խորհրդատվություններ:

Մեծ ուշադրություն է դարձվում դասախոսությունների ձևաչափի, անցկացման եղանակի և բովանդակության արդիականացման վրա: Առարկայի հիմնական հասկացությունները ուսանողին ընկալելի դարձնող դասախոսությունները պետք է ապահովեն նյութի ստեղծագործական, գիտական և տրամաբանական մատուցումը, որը պետք է օգնի ուսանողին և նպաստի անհատական, ինքնուրույն աշխատանքի, վերլուծության և եզրահանգման կարողությունների զարգացմանը: Ըստ այս նկատառման՝ 2020թ. մարտ-ապրիլ ամիսներին դասախոսական կազմի համար կազմակերպվեցին դասախոսությունների վարման նոր ձևաչափին և մեթոդաբանության առնչվող դասընթացներ, ինչպես նաև իրականացվեց սեմինարների արդյունքում նոր կազմված դասախոսությունների որակական գնահատում: Հոկտեմբեր, որ 2021-ից ավելի փոքր խմբերով կազմակերպված դասախոսությունների՝ նման ձևաչափով անցկացումը կբարելավի դասախոսությունների օգտակար գործողության գործակիցը:

Համալսարանում տարիների ավանդույթով (հատկապես I-III կուրսերում) գերակշռում է սեմինարների ձևաչափը, որը, սակայն, նույնպես վերանայման կարիք ունի դասավանդման բազմաբաղադրիչ ձևաչափի կիրառման տեսանկյունից: Համալսարանի 9 ամբիոններում վերջին 4 տարիների ընթացքում կիրառվում է ուսումնառության և գնահատման բազմաբաղադրիչ ձևաչափը. կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից իրականացրած ուսումնասիրություններն արձանագրել են տվյալ առարկաների վերջնարդյունքների որակական բարելավում:

Վերջին տասնամյակում ուսումնական գործընթացի կազմակերպման որոշակի դժվարություններ արձանագրվել են հատկապես լաբորատոր պարապմունքների ընթացքում՝ պայմանավորված փորձարարական լաբորատորիաների անբավարար հագեցվածությամբ:

Հիմք ընդունելով զարգացման ռազմավարական ծրագիրը՝ համալսարանը Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ նախաձեռնեց նորագույն, առաջադեմ ուսումնական սարքավորումներով հագեցած (համակարգչայնացված ռոբոտ-սիմուլյատորներ, վարժասարքեր, ֆանտոմներ), արտերկրում և ՀՀ-ում վերապատրաստված անձնակազմով համալրված կրթական ստորաբաժանումների ստեղծումը (Սիմուլյացիոն ուսումնական կենտրոն և Ստոմատոլոգիական կրթության գերազանցության կենտրոն) և ինտեգրումը համալսարանի կրթական ենթակառուցվածքներում: Կենտրոնների սարքավորումներն ընտրվել են շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացված հարցաթերթային հարցումների արդյունքներով բացահայտված և մասնագիտական հանրության հետ հանդիպումների ընթացքում ճշգրտված առավել խնդրահարույց և անհրաժեշտ գործնական հմտությունների ցանկով: Կենտրոններում կիրառվում են միջազգային չափանիշներին համապատասխանող նորարարական ուսանողակենտրոն կրթական տեխնոլոգիաներ՝ միտված գործնական հմտությունների ձևավորմանը և ստուգմանը, որը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով թե՛ արևմտյան, թե՛ ԱՊՀ, թե՛ տարածաշրջանում բարձրագույն բժշկական կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումները:

2018-2019 ուստարվանից բուհի կողմից ուսումնական գործընթացի նյութատեխնիկական հագեցվածության շարունակական բարելավմանն ուղղված ֆինանսական նոր քաղաքականության ներդրմամբ որոշակիորեն լուծվել են ուսումնական սարքավորումների պակասի խնդիրները և հաջորդ 2-3 տարիներին մշակված քաղաքականության կիրառման դեպքում բարելավման արդյունքները տեսանելի և հաշվարկելի կլինեն: Ավելին՝ վերջին 5 տարիների ընթացքում գործնական պարապմունքների և պրակտիկայի գործընթացն արդեն ապահովվում է սիմուլյացիոն կենտրոններում իրականացվող ուսումնառությամբ, որը նպաստում է ինչպես գործնական հմտությունների բաղադրիչի զարգացմանը, այնպես էլ ընդհանուր առաջադիմության կտրուկ բարձրացմանը:

Համալսարանի որոշ ֆակուլտետներում (հանրային առողջության, դեղագիտական) գործում է նաև ավարտական թեզերի պաշտպանության ձևաչափը:

Վերջին տարիներին որոշակիորեն բարեփոխվել է նաև ուսումնառության մեթոդաբանությունը: Ավելացել է այն ամբիոնների քանակը, որտեղ, պայմանավորված առարկայի առանձնահատկություններով,

կիրառվում են դասավանդման տարբեր արդյունավետ մեթոդներ՝ քննարկում-բանավեճ, համագործակցային աշխատանք, խնդրի վրա հիմնված ուսուցում, կոնկրետ դեպքի ուսումնասիրություն, ինդուկտիվ, դեդուկտիվ, վերլուծական, համադրական մեթոդ և այլ:

Վերը նշված գործընթացների և ամփոփիչ ատեստավորման միջև ներդաշնակության ապահովումը շատ կարևոր է ուսումնառության արդյունքների յուրացումը փաստելու տեսանկյունից: Համալսարանում գործող գնահատման 2 ձևաչափերն էլ ապահովում են ոչ միայն ուսանողների սովորելու խթանման գործընթացը, զբաղվածության մեծացումը, այլև ուսումնառության արդյունքների ստուգման արդարությունը, արժանահավատությունն ու թափանցիկությունը:

Նկատենք, որ շատ կարևոր է, որ վերը նշված գործընթացները համալսարանում կառավարվում են համապատասխան կարգերի ու կանոնակարգերի դրույթների խիստ պահպանմամբ՝ ուսանողներին այս ամենի մասին ժամանակին իրազեկելով:

Քանի որ բուհը կրթական ծրագիրը մշակելիս պետք է առաջնորդվի ՈԱԸ-ի յուրաքանչյուր մակարդակի համար սահմանված որակավորումների ուսումնառության վերջնարդյունքների ընդհանրական նկարագրիչներով, ուստի բժշկական կրթության դեպքում, երբ VI և VII մակարդակներում շնորհվող որակավորումներն ամփոփված են ինտեգրացված կրթական ծրագրում՝ համալսարանը, որպես կրթական վերջնարդյունքներ սահմանել է ՀՀ ՈԱԸ-ի VII մակարդակին համապատասխանող պահանջներ: Մինևույն ժամանակ պետք է նշենք, որ ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերն ունեն առանձնահատկություն, այն է՝ բազային բարձրագույն բժշկական կրթություն ստացած շրջանավարտը հիմնական մասնագիտական գործառնությունները (բուժական, կանխարգելիչ, ախտորոշիչ) ինքնուրույն իրականացնելու համար պետք է կրթությունը շարունակի 1-4 տարի տևողությամբ կլինիկական օրոփնատուրայում՝ ստանալով կլինիկական մասնագիտություն (սեղ մասնագիտացում) [1, 2, 3]: Ուստի կարծում ենք, որ պետության կողմից ոլորտային որակավորումների շրջանակների սահմանումը և բարձրագույն ու հետբուհական կրթության մասին նոր օրենքի ընդունումը կհստակեցնեն ուղղահայաց համապատասխանեցման չափելիությունը:

Կրթական բարեփոխումների շրջանակներում համալսարանում խիստ կարևորվում են հետադարձ կապով ուսանողներից ստացված արձագանքները: Ուստի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից ուսանողների ներկայացուցչական համակազմի շրջանում պարբերաբար իրականացվող տարաբնույթ հարցումների կազմակերպման միջոցով համալսարանը կարևորում է նաև այդ հարցումների արդյունքների ներկայացման թափանցիկության ապահովման և դրանց արդյունքում բարձրաձայնված հարցերի լուծումներին ուղղված միջոցառումների մշակման և ներդրման գործընթացների իրականացումը:

Քանի որ համապատասխանեցման հիմնական նպատակը կրթական ծրագրի որակի ապահովումն է, ուստի այն պետք է դիտարկել որպես որակի ապահովման գործընթացի մաս և որպես հիմնական գործիք կիրառել ինքնագնահատումը, որը հավաքագրված տեղեկատվության կառուցողական վերլուծություն է՝ հիմնված կրթական ծրագրի ուսումնառության համապատասխանեցման համար անհրաժեշտ հստակ չափանիշների վրա: Այս սկզբունքն է եղել համալսարանի վերջին 6 տարիների ընթացքում ներկայացված ինքնավերլուծության 2 զեկույցների հիմքում: Համապատասխանեցման մեթոդաբանության ներկայիս վիճակը և հետագա կատարելագործումը համալսարանի համար ստեղծում են անհրաժեշտ նախադրյալներ հաջորդ քայլով Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիայի բժշկական բազային կրթության որակի գլոբալ չափորոշիչներով միջազգային ծրագրային հավատագրման գործընթացի մեկնարկի համար [8]:

Եզրակացություն

Համալսարանում կիրառվող կրթական ծրագրերի համապատասխանեցումը դիտարկվում է որպես որակի ներքին և արտաքին ապահովման առանցքային գործընթաց, որն իրականացվում է որակավորման վերլուծությունից որակավորման նպատակ սխեմայով՝ հիմնված ուսումնառության ելքային արդյունքների վրա: Համապատասխանեցման մեթոդաբանության հետագա զարգացումը կնպաստի առողջապահական կրթական ծառայությունների միջազգային շուկայում համալսարանի ՄԿԾ-ների մրցունակության ապահովմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի բժշկական, ստոմատոլոգիական, դերագիտական, հանրային առողջապահական մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 4-ի N 952-Ն որոշում, հավելված 1 և հավելված 2:
2. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշում, հավելված:
3. Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենք, ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին:
4. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրաման N 1242-Ն առ 17.11.2011-ի, հավելված:
5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 7 հուլիսի 2016 թվականի N 714-Ն որոշման հավելված:
6. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 17 դեկտեմբերի 2018 թ. N 1676-Ն հրաման, հավելված:
7. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշման հավելված:
8. Basic Medical Education, WFME Global Standards for Quality Improvement, the 2015 Revision. <https://wfme.org/download/wfme-global-standards-for-quality-improvementbme/?wpdmdl=831>.
9. Biggs J. Constructive alignment in university teaching. HERDSA Review of Higher Education, 2014, Vol. 1. P 5-22.
10. Biggs J., Tang C. Teaching for Quality Learning at University. 4th edition. Open University Press, McGraw-Hill Education, 2011. P 389.
11. Brauer D.G., Ferguson K.J. The integrated curriculum in medical education: AMEE guide no. 96. Med Teacher. 2015;37:312-22.
12. Buja L.M. Medical education today: all that glitters is not gold BMC Medical Education, 2019, 19:110.
13. Case B., Zucker S. Horizontal and Vertical Alignment. Presentation by B. Case, Beijing, China at the China-US Conference on Alignment of Assessments and Instruction. Policy report. Pearson Education, Inc. July 2005 P.6.
14. Curaj A., Deca L., Pricopie R. European Higher Education Area: The Impact of Past and Future Policies. Springer, Cham 2018, P 721.
15. Directive 2005/36/EC of the European parliament and of the council of 7 September 2005 on the recognition of professional qualifications. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32005L0036&from=EN>
16. ECTS Users' Guide. Publications Office of the European Union. 2015. P 108.
17. Gallagher G. Aligning for Learning: Including Feedback in the Constructive Alignment Model: AISHE-J: 2017, Vol. 9, N.1, P 3011-30112.
18. Karakhanyan S., Militosyan L., Topchyan R., Soghikyan K., Baykov A., Ayvazyan M., Khachatryan R. Gyulazyan V. Mazmanyany A. A guideline for aligning academic programmes to the Armenian national qualifications framework. 2017, Yerevan, P 85.
19. Paris Communique Appendix III 25_05_2018. <http://www.ehea.info/cid101765/ministerial-conference-paris-2018.html>.
20. Ruge G., Tokede O., Tivendaleb L. Implementing constructive alignment in higher education – cross-institutional perspectives from Australia. Higher Education Research and Development. Nov. 2018. P. 1-16.
21. The European Higher Education Area - Achieving the Goals Communique of the Conference of European Ministers Responsible for Higher Education, Bergen, 19-20 May 2005. <http://www.ehea.info/cid101762/ministerial-conference-bergen-2005.html>

РЕЗЮМЕ

СОГЛАСОВАНИЕ РЕЗУЛЬТАТОВ ОСВОЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ В ЕРЕВАНСКОМ ГОСУДАРСТВЕННОМ МЕДИЦИНСКОМ УНИВЕРСИТЕТЕ ИМ. М. ГЕРАЦИ

Мурадян А.А.¹, Аветисян Л.Р.¹, Байков А.В.², Аветисян Г.А.¹, Бароян К.М.³

¹ ЕГМУ, администрация

² ЕГМУ, отдел образовательных программ

³ ЕГМУ, факультет общей медицины

Ключевые слова: высшее медицинское образование, национальная рамка квалификаций, согласование, качество образования, институциональная аккредитация, реформы образования.

Исходя из большого количества стейкхолдеров системы высшего медицинского образования, широкого спектра регуляторных норм на государственном и международном уровнях, особого статуса медицинских специальностей, тенденций к повышению международных стандартов качества медицинского образования, а также, учитывая динамично изменяющиеся потребности всемирного рынка труда, все большую значимость приобретает надлежащее применение методик согласования результатов освоения образовательных программ.

В статье представлен пятилетний опыт по изучению, адап-

тации и внедрению методических подходов согласования (МПС) результатов освоения образовательных программ в Ереванском государственном медицинском университете им. М. Гераци (ЕГМУ).

МПС результатов освоения образовательных программ ЕГМУ основаны на анализе квалификационных дескрипторов в комплексе с целью, задачами и предопределенными результатами освоения образовательных программ. МПС рассматриваются как основополагающие составные компоненты внутренней и внешней систем обеспечения качества образования. Дальнейшее развитие МПС может послужить серьезным подспорьем для обеспечения конкурентного преимущества образовательных программ ЕГМУ на международном рынке образовательных услуг в секторе здравоохранения.

SUMMARY

ALIGNMENT OF ACADEMIC PROGRAMS AT THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER M. HERATSI

Muradyan A.A.¹, Avetisyan L.R.¹, Baykov A.V.², Avetisyan G.A.¹, Baroyan K.M.³

¹ YSMU, Administration

² YSMU, Academic Programs Department

³ YSMU, Faculty of General Medicine

Keywords: *higher medical education, national qualifications framework, alignment, education quality, institutional accreditation, educational reforms.*

Taking into consideration a huge number of higher medical education sector stakeholders, wide spectrum regulations at national and international level, special legal status of medical specialties, global tendency for enhancement of medical education quality standards, and the international labor market trends, a proper implementation of the higher education alignment methodologies are of high demand.

The article describes a five-year experience of study, ad-

aptation and implementation of the alignment methodologies (AMs) at the Yerevan State Medical University after M. Heratsi (YSMU).

AMs are mainly based on analysis of qualifications descriptors along with the aims, objectives and intended learning outcomes of academic programs. AMs used at the YSMU are considered to be efficient tools and core compounds of internal and external education quality assurance systems. Further development of AMs could serve as an efficient tool to boost the competitive advantage of YSMU academic programs on the health care educational services international market.